

53

Դ՞ք բոլոր յերկիցների, միացե՛ք

ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

Հ Օ Խ Ս Հ Ր Ա Ծ 8 • 1 9 3 6

9

Դ-30


9
7-30

2011 - 07 22 JUN 2005

Պրայեսարթիւր բալոր յերկիրների, միացե՛ք

ՊԱՏՄԱԿԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԵՈՐՉՈՒՄ
ՅԵՎԼ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ



632

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • 1986

17 JUL 2013

33

**ՀԱՄԿ(Բ)Կ ԿԿ ՑԵՎ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ
ԺԿԽ ՎՈՐՈՇՈՒՄԸ**

Պատմության վերաբերյալ արդեն գրված դասագրքերը վերանայելու յեկ բարեկամիկու, իսկ անհրաժեշտ դեպքերում նայեկ վերափոխելու համար ստեղծել հանձնաժողով նետելու կազմով՝ ընկ. ընկ. Ժդանով (նախագահ), Թադէկ. Սպանիձե, Գարին, Լուկին, Յակովլիկ, Քիստյանսկի, Զատոնսկի, Ֆայզուլլա Խոջայեկ, Բուլբով յեկ Բուխտին:

Հանձնաժողովին իրավունք վերապահել կազմակերպելու խրմակներ առանձին դասագրքերը վերանայելու, ինչպես նայեկ մրցանակաբաշխություն հայտարարելու՝ արմատական փափախման յեմբակա նանաչվոյ դասագրքերի փոխարեն նոր դասագրքեր կազմելու համար.



49619-65

НА ФРОНТЕ
ИСТОРИЧЕСКОЙ
НАУКИ

Армпартнэдат. Эреванъ

Առաջին հերթին պետք է վերանայվեն
ԽՍՀՄ պատմության տարրական դասընթացի
և նոր պատմության դասագրելեր:

ԽՍՀՄ ժողովական նախագահ
Վ. ՄՈՒՏՈՑՅԱՆ
Համեմատական քարտուղար՝
Ի. ՄԱԼԻՆ

26 հունվարի 1986 թ.

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂԿՈՄԽՈՐՀՈՒՄ
ՅԵՎԼ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Կազմով նշանակություն՝ տալով ԽՍՀՄ
դպրոցներում քաղաքացիական պատմու-
թյան գասավանդման պատշաճ դրվածքին,
ԽՍՀ Միության ժողովրդական Կոմիսար-
ների Խորհուրդը և Համեկ(Բ)Կ Կենտրոնա-
կան Կոմիտեն գեռ 1934 թվականի մայի-
սի 16-ին ընդունեցին և հրապարակեցին
«ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական
պատմության գասավանդման մասին» հայտ-
նի վորոշումը։ Այդ վորոշման մեջ ժողկոմ-
խորհը և Համեկ(Բ)Կ Կենտրոմը հավաստեցին
պատմության գասավանդման անբավարար
դրվածքը ԽՍՀՄ դպրոցներում։ Ժողկոմխոր-
հը և Համեկ(Բ)Կ Կենտրոմն արձանագրեցին,

վոր պատմության դասագրքերի և իր իսկ
դասավանդման գլխավոր թերությունը
Նրանց վերացական սխեմատիկ բնույթն և
«Փախանակ բաղաբացիական պատմությունը
կենդանի», գրավիչ ձևով դասավանդելու, շա-
րադրելով կարևորագույն անցքերն ու փաս-
տերը ժամանակագրական հաջորդականությամբ
և բնուրագրելով պատմական գործիքներին —
առաջերտեներին տալիս են հասարակական-
տնտեսական ֆորմացիաների վերացական բնո-
րությունները և այսպիսով բաղաբացիական
պատմության կապակցված շարադրումը նեն-
գափոխաւում են վերացական սոցիոլոգիական
սխեմանվականի» (ԽՍՀՄ ժողկոմիսորհի և Համ-
կ(բ)կ Կենտկոմի 1934 թվականի մայիսի
16-ի վորոշումից):

Ժողկոմիսորհը և Կենտկոմը նշեցին, վոր
«Առաջերտեների կողմից պատմության դասընթա-
գը հաստատապես յուրացնելու վճռական պայ-
մանն և պատմական անցքերի պատմական-
ժամանակագրական հաջորդականարյան պահ-
պանումը, առաջերտեների հիմունության մեջ
առաջայման ամրացնելով պատմական կարևոր-

յերեալյաները, պատմական գործիքներին, ժա-
մանակագրական տարերվերը։ Միայն պատ-
մության այսպիսի դասընթացը կարող է ա-
պահովել պատմական նյութի՝ առակերտեների
համար անհրաժեշտ մաշցելիությունը, դիտո-
ղականությունն ու կոնկրետությունը, վորի
հիման վրա միայն հնարավոր ե նիւթ վերլու-
ծել և նիւթ ընդհանրացւմների յենթարկել
պատմական այն անցքերը, վորոնի առակերտին
մատեցնում են պատմության մարքսիստական
ըմբռնմանը»։

Մրա համապատասխան վորոշված եր մին-
չև 1935 թվականի հունիսը պատրաստել
պատմության նոր դասագրքեր,

- ա) հին աշխարհի պատմություն,
- բ) միջին դարերի պատմություն,
- գ) նոր պատմություն,
- դ) ԽՍՀՄ պատմություն,
- ե) կախյալ և գաղութային յերկիրների
նոր պատմություն։

Ժողկոմիսորհը և Համկ(բ)կ Կենտկոմը
վորոշել եյին նոր դասագրքեր կազմելու հա-
մար ստեղծել հինգ խմբակ և հաստատել

եյին այդ խմբակների անձնական կազմը։
1934 թվականի հունիսի 9-ին Համկ(ը)կ կինտկոմը և ԽՍՀ Միության ժողկոմիութը լուծեցին տարրական և վոչ լրիվ միջնակարգ դպրոցներում ԽՍՀՄ պատմության տարրական դասընթաց մտցնելու հարցը, և կազմակերպվեցին ԽՍՀՄ պատմության տարրական դասագրքեր կազմող խմբակներ։

1934 թվականի ոգոսառության 14-ին Համկ(ը)կ կինտկոմը և ԽՍՀ Միության ժողկոմիութը հավանություն տվին ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի ներկայացրած դիտողություններին «ԽՍՀՄ պատմության» և «Նոր պատմության» նոր դասագրքերի կոնսալեկտների վերաբերյալ»

Այդ դիտողությունների մեջ հանդամանորեն քննության եյին առնված և խիստ քննադատության յենթարկված յերկու կոնսալեկտներն ել, ընդվորում, ինչպես արձանագրված եր, առանձնապես անբավարար եր կազմված ԽՍՀՄ պատմության կոնսալեկտը, վորը լի յեր մեծ թվով վոչ դիտական և մարդուկանի տեսակետից անգրագետ

բնորոշումներով, տառապում եր ծայրահեղ թափթփվածությամբ, վորն առանձնապես անթույլատրելի յե այնպիսի ուղասագիրք ստեղծելիս, վորտեղ պետք ե կզուադատված լինի յուրաքանչյուր խոսքը, յուրաքանչյուր բնորոշումը»։ Խոշոր, թեև ավելի պակաս թերություններով, տառապում եր նաև «Նոր պատմության» դասագրքի կոնսալեկտը։

Ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի դիտողություններն սպառիչ կերպով նշում եյին, թե ինչ ուղղությամբ եր անհրաժեշտ վերամշակել կոնսալեկտներն ու պատրաստվող դասագրքերը։ Սակայն ԽՍՀՄ ժողկոմիուրի և Համկ(ը)կ կինտկոմը հարկադրված են հավաստելու, վոր ներկայումս ժողկոմիուրի ու կինտկոմի քննությանը ներկայացված պատմության դասագրքերը մեծ մասմբ անբավարար են և դեռևս տառապում են նույն թերություններով, վոր նշված են վերև Առանձնապես անբավարար և կազմված «ԽՍՀՄ պատմության» դասագիրքը, վոր ներկայացրել և պըոֆ. Վանագի խմբակը, ինչպես նաև անբավարար են տարրա-

կան դպրոցի համար կազմված ԽՍՀՄ պատմության տարբական դասընթացի դասագըրքերը, վոր ներկայացրել են Մինցի և Լոգիշնսկու խմբակները:

Այս հանգամանքը, վոր մատնանշված դասագրքերի հեղինակները շարունակում են պնդել կուսակցության կողմից բազմից արդեն յերեան բերված ու բացահայտորեն սնանկ պատմական բնորոշությունների և դրույթների վրա, վորոնց կիմքն են կազմում Պոկրովսկու հայտնի սխալները, ժողովոմիորհը և Կենտկոմը չեն կարող չգնահատել վորակու վկայություն այն բանի, վոր մեր պատմութանների, առանձնապես ԽՍՀՄ պատմության պատմաբանների վորոշ մասի մեջ, արմատացել են հակամարքսիստական, հակալենինյան, ըստ Եյության լիկվիդատորական, հակագիտական հայցացքներ պատմական գիտության նկատմամբ: Ժողովոմիորհը և Համեկ(բ)կ Կենտկոմն ընդգծում են, վոր պատմությունը վորակու գիտությունն լիկվիդացիայի յենթարկելու այդ վնասակար տեհնդենցներն ու փորձերը կապված են առաջին

հերթին մեր վորոշ պատմաբանների մեջ պատմական սխալ հայցացքներ տարածվելու հետ, վորոնք հասուլ են այսպես կոչված «Պոկրովսկու պատմական դպրոցին»: Ժողովոմիորհը և Համեկ(բ)կ Կենտկոմը մատնանշում են, վոր այս վնասակար հայցացքների հաղթահարման խնդիրն անհրաժեշտ նախադրյալ և հանդիսանում ինչպես պատմության դասագրքեր կազմելու, այնպես և մարքսիստական-լենինյան պատմական գիտության դարձացման ու ԽՍՀՄ-ում պատմական կըրթության վերելքի համար, վորոնք կարևոր պատմություն նշանակություն ունեն մեր պետության ու մեր կուսակցության գործի և առող սելնդի ուսուցման համար:

Մրա համալատասխան ԽՍՀ Միության ժողովոմիորհը և Համեկ(բ)կ Կենտկոմը վորոշեցին պատմության արդեն գրված դասագրքերը վերանայելու և արմատապես բարելավելու, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վերափոխելու համար ստեղծել ժողովոմիորհի և Համեկ(բ)կ Կենտկոմի հանձնաժողով, կազմված ընկերներ ժողովով (նախադահ),

Իւաղեկից, Սվանիձեյից, Գորինից, Լուկինից,
Յակովեկից, Բիստրյանսկուց, Զատոնսկուց,
Ֆայզուլլա Խոջայեվից, Բառմանից, Բուք-
նովից և Բուխարինից։ Այդ հանձնաժողովին
իրավունք և վերապահված խմբակներ կազ-
մակերպել առանձին դասագրքերը վերա-
նայելու համար, ինչպես նաև հանձնաժողով-
ի կողմից արմատական վերափոխման յեն-
թակա ճանաչված դասագրքերի փոխարեն
նոր դասագրքեր գրելու կոնկուրս հայտա-
բարել։

Ժողկոմիորնը և Կենտկոմը վորոշեցին նաև
հրապարակել մամուլում ընկերներ Ստալի-
նի, Կիրովի ու Ժղանովի դիտողությունները
և այլ նյութեր այս հարցի վերաբերյալ՝

ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՇԽԱՀՄ ՊԱՏՄՈՒ-
ԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐԻՑԻ ԿՈՆՍՊԵԿՏԻ
ԱՌԹԻՎ

Վանագի խմբակը չի կատարել առաջա-
դանքը և նույնիսկ չի ըմբռնել բուն առա-
ջարանքը։ Նա կազմել է ոռուաց պատմու-
թյան, և վոչ թե ԽՍՀՄ պատմության կոնս-
պեկտ, — այսինքն՝ Ռուսիայի պատմության
կոնսպեկտ, բայց առանց այն ժաղովուրդների
պատմության, վորոնք մտել են ԽՍՀՄ կազ-
մի մեջ (հաշվի չեն առնված Ռուսականայի,
Բելոռուսիայի, Ճինանդիայի և Մերձբալ-
թյան այլ ժողովուրդների, Հյուսիսային-կով-
կասյան ու Անդրկովկասյան ժողովուրդնե-
րի, Միջին Ասիայի և Հեռավոր Արկելքի ժո-
ղովուրդների, ինչպես նաև Վոլգայի և Հյու-

սիսային ժողովուրդների — թաթարների, բաշշկերների, մորդվերի, չուվաշների և այլն պատմության տվյալները):

Կոնսպեկտի մեջ չի ընդգծված ռուսական ցարքամի աննեկտիոնիստական — զաղութացման դերը՝ ռուսական բուրժուազիայի ու կալվածատերերի հետ միասին («ցարիզմը ժողովուրդների բանու ե»):

Կոնսպեկտի մեջ չի ընդգծված ռուսական ցարիզմի հականեղափոխական գերն արտաքին քաղաքականության մեջ, սկսած Յեկազտերինա Ռ-րդի ժամանակներից մինչև 19-րդ դարի 50-ական թվականները և նրանից հետո («ցարիզմը, վորակես միջադային ժանդարմ»):

Կոնսպեկտի մեջ մի կույտի յեն վերածված ֆեոդալիզմը և նախաֆեոդալական ժամանակաշրջանը, յերբ գյուղացիները զեռնորդացված չեյին. պետության միահեծան հասարակակարգը և ֆեոդալական հասարակակարգը, յերբ Ռուսաստանը մանրատված երբազմաթիվ ինքնուրույն կիսապետությունների:

Կոնսպեկտի մեջ մի կույտի յեն վերածված ռեակցիան և հականեղափոխությունն, հեղափոխությունն «առհասարակ», բուրժուական հեղախոփությունն և բուրժուադեմոկրատական հեղափոխությունն հասկացողությունները:

Կոնսպեկտում չեն արված Ռուսաստանի ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների ազգային ազատագրական շարժման պայմաններն ու ակրնեները և այդպիսով Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորապես այդ ժողովուրդներին ազգային ճնշումից ազատող հեղափոխությունն մնում և չպատճառաբանված, ինչպես վոր չպատճառաբանված ե մնում նաև ԽՍՀ Միության ստեղծումը:

Կոնսպեկտի մեջ առատորեն կան ամեն առևակի մաշված տրավարետային բնորոշումներ, ինչպես «Նիկոլայ առաջինի վաստիկանական տեսոր», «ուղինականություն», «պուդաչեղականություն», «կալվածատիւրական հականեղափոխության հարձակումը 19-րդ դարի 70-ական թվականներին», «ար-

դյունաբերական հեղաշրջման առաջին քայլերը», «ցարիզմի և բուժուազիայի առաջին քայլերը 905-907 թվականների հեղափոխության դեմ պայքարելիս» և այլն։ Կոնսպեկտի հեղինակները կուրորեն պատճենահանառու են ամեն տեսակի բուրժուական պատմաբանների մաշված ու միանգամայն վոչ գիտական բնորոշումները, մոռանալով, վորիքնք պարտավոր են մեր յերիտասարդությանն ուսուցանել մարքսիստական, գիտականորեն հիմնավորված բնորոշումներ։

Կոնսպեկտը չի արտացոլում արևմտայեվրոպական բուրժուական հեղափոխական ու սոցիալիստական շարժումների դերն ու ազգեցությունը Ռուսաստանի բուրժուական հեղափոխական շարժման և պրոլետարական սոցիալիստական շարժման կազմավորման վրա։ Կոնսպեկտի հեղինակներն ըստ յերեսութին մոռացել են, վոր ոռւս հեղափոխականներն իրենց համարում եյին Արևմուտքի բուրժուական-հեղափոխական մարքսիստական մտքի հայտնի կորիֆեյների աշակերտներ։

Կոնսպեկտի մեջ հաշվի չեն առնված առաջին իմպերիալիստական պատերազմի արմատները և ցարիզմի դերն այդ պատերազմում՝ իրեկ ռեզերվ արևմտայեվրոպական իմպերիալիստական պետությունների համար, ինչպես նաև հաշվի չի առնված, ինչպես ուղական ցարիզմի, այնպես ել ուղական կապիտալիզմի կախյալ դերը արևմտայեվրոպական կապիտալից, վորիք հետեանքով չոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը, վորպես Ռուսաստանը կիսազգութային վիճակից ազատագրողի, մնում և չըպատճառաբանված։

Կոնսպեկտի մեջ հաշվի չի առնված համայնքուուպական քաղաքական ձգնաժամի առևկայությունը համաշխարհային պատերազմի նախորյակին, վորն ի միջի այլոց արտահայտվեց բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի անկման մեջ, վորիք հետեանքով խորհուրդների նշանակությունը համաշխարհային պատճության տեսակետից, վորպես պրոլետարական գեմոկրատիայի կըրողների և բանվորներին ու գյուղացիներին

կապիտալիզմից աղաւագրող որդանններ, մը-
նում և չըլատճառաբանված:

Կոնսուելիոնի մեջ հաշվի չի առնված հոսանք-
ների պայքարը ԽՍՀՄ կառավարող կուռա-
նիստական կուսակցության ներսում և պայ-
քարը աշոցկելով դեմ, վորպես մանր բուր-
ժուական հակահեղափոխության արտա-
հայտության:

Յեկ այն և այն:

Առհասարակ պետք և ասել վոր կոնս-
ուելիոր կազմված և ծայրահեղորեն թափթը փ-
փած և մարքսիզմի տեսակետից վոչ բոլո-
րովին գրագետ:

Մենք ել չենք խոսում կոնսուելիոնի վոչ
ճշգրիտ վոճի և այսպեսի «բառախաղի» մա-
սին, յերբ կեղծ-Դմիտրին կոչված և Դմի-
տրի «Անվանյալ», կամ ինչպես «հին ֆեոդալ-
ների հաղթանակը 18-րդ դարում» (հայտնի
չե սակայն, թե ուր կորան և ինչպես եյին
պահում իրենց «նոր» ֆեոդալները, յեթե
նրանք առհասարակ դոյություն ունեցել են
այդ ժամանակ) և այլն:

Մենք անհրաժեշտ ենք համարում արմա-

տապես վերամշակել կոնսուելիոր վերև շարա-
դրված դրույթների վոգով, ընդվորում պետք
ե հաշվի առնվի, վոր խոսքը վերաբերում
է դասագրի ստեղծման, վորի մեջ պետք և
կշռադաված լինի յուրաքանչյուր բառ և
յուրաքանչյուր բնորոշում, և վոչ թե ան-
պատասխանատու ժուռնալային հոդվածների,
վորտեղ կարելի յե ամեն ինչի մասին ուզածի
պես շաղակրատել հետո միալով պատասխա-
նատվության զգացմունքից:

Մեզ հարկավոր և ԽՍՀՄ պատմության այն-
պիսի դասագիրք, վորտեղ Վելիկոռուսիայի
պատմությունը չանցատվի ԽՍՀՄ մյուս ժողո-
վուրդների պատմությունից — այս առաջին, -և
վորտեղ ԽՍՀՄ ժողովուրդների պատմությու-
նը չանցատվի համայնքը բոլովական պատմու-
թյունից — առհասարակ համաշխարհային
պատմությունից — այս յերկրորդ:

Ի. Ստալին

Ա. Ժդանով

Ս. Կիրով

Տ. V III 34. β.

կապիտալիզմից ազատագրող որդաններ, մը-
նում և չպատճառաբանված:

Կոնսուլեկտի մեջ հայվի չի առնված հոսանք-
ների պայքարը ԽՍՀՄ կառավարող կոմու-
նիստական կուսակցության ներսում և պայ-
քարը արող կերմի գեմ, վորպես մանր բուր-
ժուական հակահեղափոխության արտա-
հայտության:

Ցեվ այն և այն:

Առհասարակ պետք և ասել վոր կոնս-
ուլեկտը կազմված և ծայրահեղորեն թափթլվո-
ված և մարքսիզմի տեսակետից վոչ բոլո-
րովին գրագիտ:

Մենք ել չենք խոսում կոնսուլեկտի վոչ
ճշգրիտ վոճի և այնպեսի «բառախաղի» մա-
սին, յեզր կեղծ-Դմիտրին կոչված և Դմի-
տրի «Անվանյալ», կամ ինչպես «հին ֆեոդալ-
ների հաղթանակը 18-րդ դարում» (հայտնի
չե սակայն, թե մեր կորան և ինչպես եյին
պահում իրենց «նոր» ֆեոդալները, յեթե
նրանք առհասարակ գոյություն ունեցել են
այդ ժամանակ) և այլն:

Մենք անհրաժեշտ ենք համարում արմա-

տապես վերամշակել կոնսուլեկտը վերև շարա-
դրված գրությունների վոգով, ընդվորում պետք
ե հաշվի առնվի, վոր խոսքը վերաբերում
և դասագրի ստեղծման, վորի մեջ պետք ե
կշաղատված լինի յուրաքանչյուր բառ և
յուրաքանչյուր բնորոշում, և վոչ թե ան-
պատասխանատու ժուռնալային հոդվածների,
վորանեղ կարելի յե ամեն ինչի մասին ուղածի
պես շաղակրատել հեռու մնալով պատասխա-
նատվության գգացմունքից:

Մեզ հարկավոր և ԽՍՀՄ պատմության այն-
պիսի դասագիրք, վորտեղ Վելիկոռուսիայի
պատմությունը չանչառվի ԽՍՀՄ մյուս ժողո-
վուրդների պատմությունից — այս առաջին, և
վորտեղ ԽՍՀՄ ժողովաւրդների պատմությու-
նը չանչառվի համայնչվորպական պատմու-
թյունից և առհասարակ համաշխարհային
պատմությունից — այս յերկրորդ:

Ի. Ստալին

Ա. Ժդանով

Ս. Կիրով

Տ. V III 34. թ.

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՆՈՐ ՊԱՍՄՈՒ-
ԹՅԱՆ» ԴԱՍԱԳՐՔԻ ԿՈՆՍՊԵԿՏԻ
ՎԵՐՍԱԲԵՐՅԱԼ

Վորովինու նոր պատմությունն ամենաշ-
հարուստն ե բովանդակությամբ, գերհագեց-
ված ե իրադարձություններով, ինչպես նաև
նկատի ունենալով, վոր բուրժուական յեր-
կիրների նոր պատմության մեջ ամենազլիսա-
վորը, յեթե նկատի ունենանք մինչհոկտեմ-
բերյան հեղափոխության ժամանակաշրջանը
Ռուսաստանում, այդ ֆրանսական հեղա-
փոխության հաղթանակն ե կապիտալիզմի
հաստատումը Յեվրոպայում ու Ամերիկա-
յում, — գտնում ենք, վոր ավելի լավ կլիներ,
յեթե նոր պատմության դասագիրքն սկսվեր
ֆրանսական հեղափոխության վերաբերյալ

գլխով: Նախորդող անցքերի հետ կապ ստեղ-
ծելու համար կարելի յեր տալ մի փոքր
ներածություն՝ նիդերլանդական ու անգլիա-
կան հեղափոխությունների հիմնական անց-
քերի համառոտ շարադրանքով, նիդերլան-
դական ու անգլիական հեղափոխությունների
անցքերի մանրամասն շարադրանքը տալով
միջին դարերի պատմության դասագրքի
վերջում:

Նշանակում ե, մինք առաջարկում ենք
կոնսպեկտից դուրս գցել առաջին մասը
(վեց գլուխ), այսինքն՝ ամբողջ առաջին
բաժինը, փոխարինելով այն համառոտ նե-
րածականով:

Կոնսպեկտի գլխավոր թերությունը համա-
րում ենք այն հանդամանքը, վոր նա բա-
վականաչափ խիստ չի ընդգծում քրանսա-
կան հեղափոխության (բուրժուական հեղա-
փոխության) և Ռուսաստանի Հոկտեմբե-
րյան հեղափոխության (սոցիալիստական
հեղափոխության) միջև յեղած տարբերու-
թյան և հակադրության վողջ խորությունը:
Նոր պատմության դասագրքի հիմնական

առանցքը պետք ել լինի հենց այս հակառ
դրության գաղափարը բուժուական հեղաշ
փոխության և սոցիալիստական հեղափոխու-
թյան միջև Ցույց տալ վոր ֆրանսական
(և ամեն մի այլ) բուրժուական հեղափո-
խություն ժողովրդին աղատելով ֆեոդա-
լիզմի ու աբսոլուտիզմի շղթաներից՝ նոր
շղթաներ եր գրել նրա վրա—կապիտալիզմի
ու բուրժուական դեմոկրատիայի շղթաները,
մինչեռ Ռուսաստանի սոցիալիստական հե-
ղափոխությունը ջախջախեց բոլոր ու ամեն
տեսակի շղթաները և ժողովրդին ազատեց
ամեն ձեր շահագործումից—ահա թե վորը
պետք ել լինի նոր պատմության դասագրքի
կարմիր թելը:

Ուստի և չի կարելի թույլ տալ վոր ֆրան-
սական հեղափոխությունն անվանեն պար-
զապես «միծ», այս պետք ե անվանել ու
մեկնաբանել վորպես բուժուական հեղա-
փոխություն:

Ճիշտ այդպես ել չի կարելի Ռուսաստանի
մեր սոցիալիստական հեղափոխությունն
անվանել պարզապես Հոկտեմբերյան հեղա-

փոխություն — այս հարկավոր ե անվանել
ու մեկնաբանել վորպես սոցիալիստական
հեղափոխություն, խորհրդային հեղափոխու-
թյուն:

Սրա համապատասխան հարկավոր ե վե-
րակառուցել նոր պատմության դասագրքի
կոնսպեկտը, ընտրելով համապատասխան
բնորոշումներ ու տերմիններ:

Կոնսպեկտի մեջ նոր պատմության բա-
ժանումը յերկու մասի մենք գտնում ենք
քիչ պատճառաբանված ու պատահական,
կատարված ինչ վոր մի անհասկանալի հատ-
կանիշով։ Մենք նպատականարմար կդունե-
յինք նոր պատմությունը բաժանել յերեք
մասի.

Առաջին մաս — ֆրանսական բուրժուա-
կան հեղափոխությունից մինչև ֆրանս-
պրուսական պատերազմն ու Փարիզի կոմու-
նան (բացառյալ): Այդ կլինի առաջարկոր
յերկերներում կապիտալիզմի հաղթանակի և
հաստատման ժամանակաշրջան:

Եերկրորդ մաս — ֆրանս-պրուսական պա-
տերազմից ու Փարիզի կոմունայից մինչև

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթաւ-
նակը Ռուսաստանում և իմպերիալիստական
պատերսգմի ավարտումը (ներառյալ): Այդ
կենի կապիտալիզմի սկզբող անկման, Փա-
րիզյան կոմունայի կողմից կապիտալիզմին
հասցված առաջին հարվածի, հին «ազատ»
կապիտալիզմն իմպերիալիզմի վերաճելու և
Հոկտեմբերյան հեղափոխության ուժերով
ԽՍՀՄ-ում կապիտալիզմը տապալելու ժա-
մանակաշրջան, հեղափոխություն, վորը նոր
դարագլուխ բաց արեց մարդկության պատ-
մության մեջ:

Յերրորդ մաս — 1918 թվականի վերջից
(պատերազմի ավարտման տարին) մինչև
1934 թվականի վերջը: Դա մի կողմից կլինի
արդ յերկիրներում հետպատերազմյան քա-
ղաքական ճգնաժամի ժամանակաշրջան, ֆա-
շեզմի և գաղութների ու ազդեցության
շրջանների համար մզգող պայքարի ուժե-
ղացման և մյուս կողմից՝ ԽՍՀՄ քաղաքա-
ցիական կարիքների ու ինտերվենցիայի ժա-
մանակաշրջան, առաջին հնդամյակի և յեր-
կրորդ հնդամյակի սկզբի ժամանակաշրջան

ԽՍՀՄ-ում, մեր յերկրում սոցիալիզմի հաղ-
թական շինարարության ժամանակաշրջան,
կապիտալիզմի վերջին մասցորդներն արմա-
տակալ անելու ժամանակաշրջան, ԽՍՀՄ-ում
սոցիալիստական ինդուստրիայի հաղթաւ-
նակի ու վերելքի, գյուղում սոցիալիզմի
հաղթանակի, կոլոնտեսությունների ու
խորհանութեառությունների հաղթանակի ժա-
մանակաշրջան: Մենք մեծ սխալ ենք համա-
րում այն, վոր կոնսպեկտի հեղինակները
1923 թվականի վրա ընդհատում են սկառ-
մությունը: Այս սխալը պետք է ուղղել
պատմությունը հասցնելով մինչև 1934 թվա-
կանը: Դրա համապատասխան հարկ կլինի
կատարել նյութի, բաժինների ու գլուխ-
ների վերափոխում ու վերաբաշխում:

Լավ կլիներ կոնսպեկտն ազատել հին,
մաշված արտահայտություններից, ինչպես
որինակ՝ «հին կարգ», «նոր կարգ» և այլն:
Ավելի լավ կլիներ բրանք փոխարինել «մինչ-
կապիտալիստական կարգ», կամ ավելի լավ
ե «աբսոլուտիստական» փեովալական կարգ»
բառերով, իսկ «նոր կարգ» փոխարին սակա-

«կապիտալիզմի ու բուրժուական դեմոկրատիայի կարգ», Այսպիսի փոփոխության գեղքում այսպես կոչված «նոր կարգը», այսինքն՝ կապիտալիստական կարգը, արգեն հանդես կը վորպես նին կարգ ԽՍՀՄ խորհրդային կարգի համեմատությամբ, վորը մարդկային հասարակության կառուցվածքի բարձրագույն տիպն են ներկայացնում:

Լավ կլիներ նաև կոնսպեկտն ազատել «եպոխաների» չափից գուքս առատությունից: «Կոնսուլականության եպոխա», «Նապոլեոնի եպոխա», «Պիրեկառիայի եպոխա» — արդյո՞ք չափազանց շատ չեն եպոխաները:

Մեզ նմանապես սխալ են թվում այն, վոր գաղութային հարցին կոնսպեկտի մեջ անհամաշափ քիչ տեղ են տրված: Այն ժամանակ, յերբ Ժորժ Զանդերին, Շապենգլերներին, Կիպլինգներին և ուրիշներին բավականաշափ շատ ուշագրություն են հատկացված, գաղութային հարցին և դրությանն այնպիսի մի պետության մեջ, ինչպես ասենք

Զինաստանը, քիչ ուշագրություն են նվիրված:

Լավ կլիներ նաև «Գերմանիայի և Իտալիայի միավորում» ֆորմուլն փոխարինել «Գերմանիայի և Իտալիայի վերամիացումն ինքնուրույն պետությունների մեջ» ֆորմուլայով: Այլապես կարող են այնպիսի տպավորություն ստացվել, վոր խոսքը վերաբերում են վոչ թե անցյալում բաժանվածան յեղած այնպիսի պետությունների վերամիացման համար պայքարելուն, ինչպես Գերմանիան ու Իտալիան, այլ այդ պետությունները մի պետության մեջ միավորելուն:

Ընդհանուր առժամբ նոր պատմության կոնսպեկտը, մեր կարծիքով, կազմված են ավելի խելացի կերպով, քան ԽՍՀՄ պատմության կոնսպեկտը, բայց այս կոնսպեկտի մեջ, այնուամենայնիվ բավականին շատ շփոթ կա:

Ի. ՍՏԱԼԻՆ

Ս. ԿԻՐՈՎ

Ա. ՃԳԱՆՈՎ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՄԵՐ ԴՊՐՈՑՈՒՄ

1934 թվականի մայսի 16-ին ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների Խորհուրդը և ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն վորոշում ընդունեցին ԽՍՀՄ դպրոցներում քաղաքացիական պատմություն դասավանդելու մասին։ Այս վորոշման մեջ քննադատության եր յենթարկվում կարևորագույն անցքերն ու փաստերն իրենց ժամանակագրական հաջորդականությամբ շարադրելու և պատմական գործիչների ընութագրման միջոցով կոնկրետ պատմությունը տալու փոխարեն, հասարակական-անտեսական ֆորմացիաների վերացական բնորոշումների դասավանդումը մեր դպրոցներում։ Հին աշ-

խարհի, միջին դարերի պատմության, նոր պատմության, ԽՍՀՄ պատմության և կախյալ ու գաղութային յերկիրների նոր պատմության դասագրքեր ստեղծելու համար ԽՍՀՄ Ժողկոմիորհը և ՀամԿ(բ)Կ Կենտկոմը ստեղծեցին հինգ խմբակ, վորոնք պետք են մինչև 1935 թվականի հունիս ամիսը կատարելուն իրենց աշխատանքը։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմը չսահմանափակվեց նոր դասագրքերի բնույթը վորոշելով և նրանց պատվերը տալով։ Նա պատմաբանների համապատասխան խմբերից պահանջեց ներկայացնել դասագրքերի կոնսպեկտները և մի շարք այդպիսի կոնսպեկտներ մանրազնին քննադատության յենթարկեց։ ԽՍՀՄ պատմության և նոր պատմության դասագրքերի կոնսպեկտների առթիվ ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի ստորև տպագրվող դիտողությունների մեջ (1934 թվականի ոգոսառությունը՝ 8-ի և 9-ի) Կենտկոմը քննադատության յենթարկելով կոնսպեկտները, ճշգրիտ ցուցումներ տվեց պատմաբան-

Ներին՝ նրանց առջև կանգնած խնդիրների
վերաբերյալ:

ԽՍՀՄ պատմության վերաբերյալ նա
մատնանշեց, նաև՝ այս պատմությունն ընդ-
հանուր պատմության շրջանակներում մեկ-
նաբանելու անհրաժեշտությունը, առանձ-
նապես նշելով արևմտաշեվրոպական բուք-
ժուական-հեղափոխական ու սոցիալիստա-
կան շարժումների դերն ու ազդեցությունը
Ռուսաստանի բուքժուական-հեղափոխա-
կան շարժման և պրոլետարական-սոցիստ-
լիստական շարժման նկատմամբ: Յերկրորդ,
Կենտկոմը պահանջեց պատմաբաններից,
վոր նրանք տան վոչ թե ռուսաց պատ-
մության դասագրքեր, այլ ԽՍՀՄ պատմու-
թյան, այսինքն ԽՍՀՄ կազմի մեջ մտնող
բոլոր ժողովուրդների անցյալի պատմու-
թյան դասագրքեր: Ինչ վերաբերում ե ցա-
րական Ռուսաստանի պատմությանը, կենտ-
կոմը պահանջեց արտացոլել ցարիզմի դերը,
վորպես ժողովուրդների բանտի և վորպես
միջազգային ժանդարմի:

Նոր պատմության դասագիրք կազմելու

վերաբերյալ ցուցումների մեջ կենտկոմն
առաջադրեց պատմության այնպիսի պերիո-
դիզայնիս, վորը տարբեր և բուքժուական
դասագրքերում ընդունվածից, այսինքն այն-
պիսին, վորը հենվում ե անտեսական զար-
գացման հիմնական փուլերի վրա: Նոր պատ-
մությունը պետք է լինի կապիտալիզմի հաղ-
թանակի և նրա կործանման սկզբի պատ-
մություն: Նա սկսվում ե Փրանսական հե-
ղափոխությունից, վորն առաջին անգամ
մեծ յերկրում հաստատեց բուքժուազիայի
իշխանությունը, և Անգլիայի արդյունաբե-
րական հեղաշրջումից, վորը հիմնական արն-
տեսական լծակներ ստեղծեց բուքժուազիա-
յի տիրապետության համար ի դեմս ժամա-
նակակից արդյունաբերության: Նոր պատ-
մությունը կենտկոմը բաժանեց յերեք շըբ-
ջանի, — 1. Փրանսական հեղուփոխությու-
նից մինչև Փրանսապրուսական պատերազմը,
այսինքն ազգային պատերազմների ու հեղա-
փոխությունների միջոցով զեկավար կապի-
տալիստական պետությունների վերջնական
ձևավորման ժամանակաշրջանը, 2. Փրանս-

պրուսական պատերազմից մինչև 1914—1918 թվականների համաշխարհային պատերազմը, այսինքն՝ արդյունաբերական կապիտալիզմից մասնապոլիստականին անցնելու, իմպերիալիզմի ծագման և առաջին համաշխարհային իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանը, պատերազմ, վորը ծնեց առաջին սոցիալիստական հեղափոխությունը, Յ. յերրորդ շրջան Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից մինչև այսոր, այսինքն կապիտալիզմի փլուզման սկզբնավորության և աշխարհը սոցիալիստական ու կապիտալիստական սիստեմների պառակտվելու ժամանակաշրջան։

Վորպես ամբողջ նոր պատմության հիմնական առանցք, Կենտկոմը մատնանշեց բուրժուական ու սոցիալիստական հեղափոխությունների միջև յեղած հակադրությունը։

Բացի այս հիմնական դրույթներից, կուսակցության Կենտկոմը պահանջեց հրաժարվել բուրժուական, առաջին հերթին լիբերալ պատմաբաններից փոխ առնված հնացած, վոչ ստույգ բնորոշումներից, բոլոր

դասակրքերում կիրառել մարքսիզմ-լենինիստիկ ստույգ, վորոշակի և գիտական հասկացողությունները, առանց վորի աշակերտներին չի կարելի տալ մարդկության զարգացման իրական պատկերը։

Մենք այսպես մանրամասն ենք շարադրում ընկերներ Ստալինի, Կիրովի և Ժդանովի դիտողությունների գլխավոր բովանդակությունը՝ թե մեր յերիտասարդ պատմաբաններին և թե ամբողջ խորհրդային հասարակայնությանը ցույց տալու համար այն նշանակությունը, վոր Համկ(բ)կ Կենտկոմն ընկեր Ստալինի գլխավորությամբ, տալիս ե պատմական գիտության ու նրա դասավանդմանը։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն, վորը գեկավարում ե պատմության մեջ չտեսնված շինարարություն, նախապատրաստում ե յերկրի պաշտպանությունը, ժամանակ գտալ ամենալուրջ կերպով զբաղվելու պատմության դասագրքերի հարցով, վորով հետև նա Մարքսի, Ենգելիսի ու Լենինի նման պատմության մեջ տեսնում ե սոցիալիզմի համար մզվող պայքարի հղոր զենքը։ ԽՍՀՄ

ժողովրդական մասսաները պետք գիտենան
մարդկության իսկական պատմությունը, աշ-
խատավորության ստրկացման և աղատա-
գրման պատմությունը, պետք և գիտենան
թե վորանեղից ենք յեկել և ուր ենք գնում
մենք, քանի վոր այդ կասմապատկի բան-
վորների ու կոլանտեսականների համոզ-
մունքը սոցիալիզմի անխուսափելի հաղթա-
նակի նկատմամբ և կտա նրանց այլ հաղ-
թանակի պայմանների իմացություն։ Նրանք
պետք ե կոնկրետ պատկերացում ստանան
շահագործող դասակարգերի ուժի աղբյուր-
ների ու տիրապետության մեթոդների մա-
սին, պատկերացում՝ աշխատավորների ուժի
աղբյուրների և ազատագրման համար նրանց
մղած պայքարի մեթոդների մասին։ Նրանք
պետք ե ստանան վոչ թե առաջ յեկող ու
քայքայվող հասարակական տնտեսական
ֆորմացիաների անկենդան սխեմա, այլ գա-
սակարգերի պայքարի կոնկրետ պատկերը՝
նրանց առաջնորդների բնութագրումով, այդ
պայքարում դասակարգային հարաբերու-
թյունների կոնկրետ բնութագրումով, վոր-

ըովհետև այդ յեղանակով միայն պատմու-
թյունը կսովորեցնի նրանց այն, ինչ նրա
ինդիքտ և հանդիսանում էր գիտություն
քաղաքականության մասին, այսինքն՝ իշ-
խանության ու նրա պահպանման համար
պայքարելու մասին։

Համեկ(բ)կ կենտկոմի ցուցութիւնը լիովին
չեն կատարված։ Ներկայացված դասագրքե-
րը մասսամբ բոլորովին չեն համապատաս-
խանում այդ պահանջներին, իսկ մասամբ ել
զեռ վերամշակման կարիք են զգում։ Ուստի
և Կուսակցության կենտկոմն ու ԽՍՀՄ ժող-
կութիորնը հանձնաժողովնաշխակեցին, ընկեր
Ժողովը նախագահությամբ, վորի նպա-
տակն ե մինչեւ վերջը հասցնել պատմության
դասագրքեր ստեղծելու աշխատանքը։ Այդ
աշխատանքը, վորքան ել գա տարորի-
նակ թվա, առաջել խոշոր դժվարություն-
ների հանդիպեց ԽՍՀՄ պատմության, քան
թե ընդհանուր պատմության բնագավառում։
Արժե կանգ առնել այդ դժվարությունների
պատճառների վրա, քանի վոր դրանք վե-
րաբերում են վոչ թե հեղինակների մի փոք-

ըտթիվ խմբի, այլ մեր պատմական գիտության վիճակին:

ԽՍՀՄ պատմության ասպարեզում դժվարությունները պիտք ե վորոնել յերկու բնագավառում: Դրանցից մեկն այն ե, վոր Ռուսաստանի հին կալվածատիրական՝ բուրժուական պատմական գիտությունն զբաղվում եր համարյա բացառապես վելիկուուների պատմությամբ: Մեր պատմաբանները դեռ չեն կարողացել բավարար չափով մշակել Ռուկրախնայի, Բելոսուսիայի, Անդրկովկասի ու Կենտրոնական Ասիայի ժողովուրդների և ԽՍՀՄ-ում բնակվող մոնղոլական ժողովուրդների պատմությունը: Յերկրորդ զըժվարությունն այն ե, վոր ոռւսաց պատմության բնագավառում դեռ մինչև վերջը կատարված չե վոչ-բոլշևիկյան տրագիֆիաների ջախջախման այն աշխատանքը, վոր «Բոլշևիզմի պատմության մի քանի հարցերի մասին» աշխատությամբ ընկեր Ստալինի յելույթի ազդեցության տակ կատարվեց ընդհանուր պատմության բնագավառում, աշխատություն, վորն, ինչպես հայտնի յե-

մեր պատմաբանների առաջ կտրուկ կերպով զըեց մեր պատմական զբականության մեջ կիսամենչելիյան, կիսացենտրիստական գաղափարները և տրոցկիստական կոնտրաբան-գըլիկիլացիայի յենթարկելու հարցը: ԽՍՀՄ պատմության բնագավառում վերացված չեն Մ. Ն. Պոլրովսկու դպրոցի մշասակար տրա-գիցիաները:

Մ. Ն. Պոլրովսկին ձևակերպվել ե բուր-ժուական ու մանր բուրժուական պատմա-բանների սուբյեկտիվիզմի դեմ մղվող պայ-քարում, վորոնչ թագավորների ու նրանց գործողությունների մեջ եյին տեսնում պատ-մության գլխավոր շարժիչ ուժը: Այդ հա-յացքներին նա հակազրում եր տնտեսական հարաբերությունների զարգացումը՝ իբրև պատմության հիմնական գործոն: Բայց դի-ալեկտիկական մատերիալիզմը հանդեցնելով ելունումիզմի, կամ ավելի ճիշտն ասած՝ տըն-տեսական ինքնահօսի, նա կարող եր ստեղ-ծել մայն սոցիալական փորմացանների սը-խեմա և վոչ թե դասակարգային պայքարի կենդանի պատմություն, պիտության՝ իբրև

պայքարի լծակի՝ հսկայական դերով։ Ընդ-
վորում, այդ սխեման պարզեցված եր, նա
անցումները ու տեղաշարժեր չեր տեսնում մի
ֆորմացիայի շրջանակներում։ Բավական և
միայն համեմատել լենինի յերկերում ցըված
գիտլեկտիկական ամենաճկուն բնութա-
գրումները ցարիկմի զարգացման ժաման, իբրև
ազնվական միապետության, վորին քայլ առ
քայլ քայքայում եր կապիտալիզմը, վորը
դիջումներ եր անում բութուազիային, և
վորը կործանվեց իբրև ազնվական միապե-
տություն, — Պոկրովսկու անկենդան սխեմայի
հետ, վորը ցարիկմի մեջ տեսնում եր առեւ-
տրական կապիտալի գործիք, հասկանալու
համար, թե վորքան խորթ ելենինիզմին Պոկ-
րովսկու սխեման։ Պոկրովսկին մահվանից ա-
ռաջ զրած իր հողվածներից մեկում ընդունեց
իր սխեմայի վոչ գիտական լինելը պաշտ-
պանվելով միայն այն կշտամբանքից, թե նա
հակալենինյան ե։ Բայց վոչ-գիտական սխե-
ման չի կարող հակալենինյան չլինել։ Պայքա-
րը Պոկրովսկու գլորոցի հակալենինյան տրա-
դիցիաների դեմ սուսաց պատմության թե

մեթոդի և թե կոնկրետ պատկերի մեջ, և
Պոկրովսկու գլորոցի արագիցիաների հաղ-
թահարումը, և ՍՀՄ մարքսիստական լինին-
յան պատմության ստեղծման պայմանն են
հանդիսանում։


Տպագրելով այն գիտողությունները, վոր
արել են կենտրոնական Կոմիտեյի ներկա-
յացուցիչներն ընկեր Ստալինի գլխավորու-
թյամբ, դիտողություններ, վորոնք իսկա-
պես վոչ միայն ցուցումներ են հանդիսանում
մեր գլորոցական դասագրքերի հեղինակների
համար, այլև աշխատանքի մի ամբողջ ծրա-
գիր մեր պատմաբանների հաւաք, մենք
գտնում ենք, վոր այդ աշխատանքի վրա
պետք ե գրավել վոչ միայն մեր պատմա-
բանների, այլև մեր կուսակցական հասա-
րակայնության ուշադրությունը։ Մի ժամա-
նակ, ընդհատակում բանվորներ փոքրաթիվ
խմբեր փորձում ելին մարքսիզմի հիմնադիր-
ների հանրամատչելի բրոցյուրներով ու յեր-
կերով յուրաքնել պատմական գիտության
այրութենք, այն դարձնելու համար բուր-
ժուադիայի դեմ, վորը կարողանում եր պատ-

մական առաստելը հիանալի կերպով ոգտազործել ժողովրդական մասսաների գաղափարական ստրկացման համար։ Խորհրդային պրոլետարիատը, ստեղծելով պրոլետարական հզոր պետություն, բանվորների ու գյուղացիների հարյուր հազարավոր զավակներին հնարավորություն տալով զբաղվելու գիտական աշխատանքով, ստեղծեց այնպիսի պայմաններ, վորոնց մեջ Մարքսի-Լենինի պատմական ուսմունքի հիման վրա կարելի յէ ստեղծել այնպիսի պատմագիտություն, վորն ընդգրկում է մարդկության ամբողջ զարգացումը, վորը խորտակում է կալվածատերերի ու բուրժուազիայի բոլոր առասպելները և պատմական ճշմարտության զորեղ սուր և տալիս ոլրոլետարիատի ձեռքը։

Ստալինը, Մարքսի, Ենգելսի և Լենինի լավագույն աշակերտը, նրանց գործը շարունակողը մեզ ցույց տվեց ինչպես մյուս բոլոր բնառավառներում, այնպես և պատմության բնագավառում, թէ ինչպես շարունակէլ նրանց աշխատանքը։ Նա ցույց տվեց

մեզ, վոր այդ շարունակումը պահանջում եւ ամբողջ պատմական նյութին տիրապետել Մարքսի, Ենգելսի և Լենինի ուսմունքի վորով, բուրժուազիայի, մանր բուրժուազիայի ու նրանց մենշևիկյան-եսերական-տրոցկիստական թափթափուկների մեթոդների ու ամբողջ գաղափարախոսության անողոք քննադատության վորով։ Կուսակցությունը, նրա կենտրոնական կոմիտեն, ընկեր Ստալինը պահանջում են պատմաբաններից, վոր հաղթահարելով նրանց խանգարող տրագիցիաները, իսորթ ազգեցություններն ու մանրախնդրությունը, նրանք ձեռնամուխ լինեն աշխատանքի այնպիսի յեռանդով ու այնպիսի թափով, վորով մենք կառուցում ենք մեր սոցիալիստական արդյունաբերությունը, կոլտնտեսությունները, Կարմիր բանակը։ Սոցիալիստական մեծ յերկիրը պահանջում է պատմական մեծ գիտություն։

«Պրավդա»-յի տուաջնորդողը
1936 թ. հունվարի 27



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

b^g


Համկ(բ)կ կեւ ԽՍՀ Միության ժկա վորչումը	3
ԽՍՀ Միության ժողկոմիորհում և Համկ(բ)կ կենտկոմաւմ	5
Դիակողություններ «ԽՍՀՄ պատմության» դաս- սագրքի կոնսպեկտի առթիվ	13
Դիակողություններ «Նոր պատմության» դասա- գրքի կոնսպեկտի մասին	20
Պատմության դասավանդումը մեր դպրոցում . .	28

Թարգմ. Մ. Զաքարյան, խմբ. Հ. Գասպարյան,
առելն. խմբ. Ա. Խաչատրյան, սըբագրիչ՝ Վ. Զիդեղյան

Դավիթի լիազոր № 1053, հրատ. № 357,
պատ. № 102, տիրաժ 5,000, ինդեքս ս 1

Հանձնված ե արտադրության 9/III 1936 թ.
ստորագրված ե տպագրության 1/IV 1936 թ.

Գ-11-ՆԸ ԱՊ Լ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0403175

7 МАЯ 1936 362

ЧИСЛО 40 Ч.



НА ФРОНТЕ
ИСТОРИЧЕСКОЙ
НАУКИ

Армпартиздат, Эреванъ